ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ «ՈՒսուցչի ստեղծագործական մոտեցումը ուսուցման միջոցների, ձևերի, մեթոդների, և հնարների հարցում »

Մասնակցի անուն, ազգանունը՝ Անդրեասյան Արփինե

Դպրոցը՝ Արարատ քաղաքի Ժ.Մկրտչյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց

Դասավանդած առարկան՝Աշխարհագրություն

Արարատ 2023թ.

Բովանդակություն

1.Ներածություն_____3

Գլուխ 1

1.1. Դասի խթանման փուլի ակտիվ մեթոդներ_____5

Գլուխ 2

2.1.Դասի իմաստի ընկալման փուլի ժամանակ կիրառելի մեթոդներ_____7

Գլուխ 3

3.1.Դասի կշռադատման փուլի մեթոդներ_____11

Գլուխ 4

4.1. Դասի արդյունավետության բարձրացման մեթոդներ_____14

Գլուխ 5

5.1. Տրամաբանական համառոտագրություն_____17

6. Եզրակացություն_____18

7. Գրականության ցանկ_____20

Ներածություն

Ժամանակակից աշխարհում կրթական զարգացումներն ընթանում են շատ արագ: Այդ առումով էապես փոխվում են ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունների ձևավորման սկզբունքները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը: Կրթության բովանդակային և մեթոդաբանական խոր փոփոխությունների համատեքստում առաջնային է դառնում կրթական գործընթացի հաղորդակցական-երկխոսական բնույթի ապահովումը ինքնակառավարման, փոխներգործության, տեղեկատվության մատչելիության, մեդիակրթության գաղափարներով: Այս տեսանկյունից կրթության բովանդակության յուրացումն ընթանում է ոչ թե սովորողին պատրաստի գիտելիքների փոխանցմամբ, այլ այնպիսի մեթոդների կիրառմամբ, որոնք ուսուցման սուբյեկտների փոխհարաբերություններին փոխներգործուն բնույթ են հաղորդում՝ ձևավորելով ինքնուրույնություն, ակտիվություն, քննադատական մտածողություն և ուսումնական նյութերի նկատմամբ արժեքային-գնահատողական վերաբերմունք: Կրթության բովանդակությունն արտահայտում է հասարակության սոցիալական պատվերը. Ժամանակակից աշխարհն, իր կառուցվածքային փոխակերպումներով, պահանջում է անձի այնպիսի կարողությունների ձևավորում, որոնք հնարավորություն կտան կողմնորոշվել տեղեկատվական հոսքում, դրսևորել ստեղծագործական, վերլուծական կարողություններ: Իսկ դրան հասնելու համար ուսուցիչը պետք է զինված լինի մեթոդների արդյունավետ ձևերով: Դասավանդման միանգամայն տարբեր ձևերի ընտրությունը նախատեսում է գիտելիքի փոխանցում ոչ թե ավանդական սկզբունքով, այլ հնարավորություն է տալիս ինքնուրույն հասնել նյութի իմացությանն ու տալ անձնական գնահատական, արտահայտել վերաբերմունք և հայտնել սեփական կարծիքը: Աշխարհագրությունը բազմաբովանդակ առարկա է և այն հետաքրքիր դարձնելու համար մշակվել են և մշակվում են զանազան մեթոդներ և հնարներ:

Մեթոդն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝ գիտելիքները, կարողությունները և հմտությունները յուրացնելու եղանակ է: Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտկարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների

աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մեթոդների զանազան ձևերի կիրառման նպատակահարմարությունն ու դրանց գործադրման առանձնահատկությունները աշխարհագրության դասերի ընթացքում՝ որպես նյութի գաղափարական բովանդակության վերհանման ու կերպարների բնութագրման միջոց, և մշակել ուղղորդող առաջարկություններ:

Մեր նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և ներկայացնել գիտամեթոդական գրականության մեջ փոխներգործուն մեթոդների վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները,
- հետազոտել ավանդական մեթոդների կիրառման ազդեցությունը ստեղծագործության գաղափարական բովանդակության վերհանման և կերպարների բնութագրման գործընթացում,
- փորձարկել մեթոդների կիրառման առանձնահատկություններն ու արդյունավետությունը դասերի իրականացման ընթացքում:

Գլուխ 1

1. 1. ԴԱՍԻ ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Ներկայումս աշխարհագրության իմացության անհրաժեշտությունը նկատելի է հասարակության գրեթե բոլոր շերտերի կողմից, քանի որ օտարերկրյա շփումներն ընդլայնվում են: Այսպիսով հասարակության քաղաքական-սոցիալական պահանջները փոխվում են, հետևաբար փոխվում են նաև կրթության ոլորտում մեթոդական կիրառությունները: Ավանդական մեթոդներին փոխարինում են ինտերակտիվ մեթոդներն ու խաղերը, որնց միջոցով սովորած նյութը ավելի երկար է մնում հիշողության մեջ, քան պարզապես թարգմանած-կարդացած դասերը: Աշխարհագրության դասավանդման մեթոդների խնդիրը բարդ է, քանի որ դրանք հիմնված են տարբեր բնութագրերի հիման վրա:

- Մտագրոհ
- Հարցեր
- Համառոտ զրույց և այլն

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

ա/ Նախապատրաստել սովողներին նոր դասի ընկալմանը, դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միրոցով հատկապես երբ նոր դասը հնի շարունակությունն է;
բ/ բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները;
գ/Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ;
դ/ աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում; Դասի նախապատարաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով,նոր դասի թեման և նպատակը հաղորդելով;

[2] Westwood, P. (2008). What teachers need to know about Teaching methods. Camberwell, Vic, ACER Press



Դասի խթանման փուլի Մտքերի տարափը կամ մտագրոհը սովորողների աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է Դասարանի աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում նրանցից յուրաքանչյուրյ արտահայտում է սեփական տեսակետները առանց որևէ մեկնաբանության կամգնահատական տալու փորձի; Բոլոր մտքերն ու գաղափաարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա; Ավելին պատկերավոր բնութագրելու համար երբեմն ասվում է որ <<մտքերի տարափ>> մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարները ընդունելի են << սխալ >> չկա;

Մտագրոհը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը;

Նշենք որոշ հանգամանքներ՝ մեթոդը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն:

ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

ԳՈՒՍ (անգլ.՝ KWL table or KWL chart) մեթոդը երեք սյունյակից բաղկացած մի աղյուսակ է նկարդալու ընթացքում կարող է դառնալ սովորողի ուղեցույցը[3]:

Այս մեթոդի քայլերը.

1. Գլխավոր թեման գրել ԳՈՒՍ աղյուսակի վերևում: Սովորողներին հարցնել, թե ինչ գիտենդասի թեմյի մասին: Նրանց ասածները գրի առնել աղյուսակի առաջին՝ «Գ- Ի"նչ գիտեն արդեն» սյունակի մեջ:

2. Սովորողներին հարցնել, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն, և գրանցել դրանք աղյուսակի «Ու- Ի"նչ են ուզում սովորել» սյունակի մեջ, օգնել դասակարգել հարցերը:

3. Հանձնարարել կարդալ ընտրված հատվածը և գտնել այն մասերը, որոնք պատասխանումեն կազմած հարցերին:

4. Կարդալն ավարտելուց հետո լրացնել երրորդ սյունյակը «Ս- Սովորել եմ»

[3] https://hy.wikipedia.org/wiki/ԳՈՒՍ_(Գիտեմ-Ուզում_եմ_Սովորել-Սովորել_եմ)

ԴԱՍԻ ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌԵԼԻ ՄԵԹՈԴՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

- Վենի դիագրամա
- Աղյուսակների կազմում/ Տ-աձև, Մ-աձև/
- Ապագայի անիվ
- Համառոտ դասախոսություն կամ պատմել
- Բանավեճ
- Զրույց
- Խորանարդում և այլն

Պրիզմա

Պրիզմա մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողի ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումը ապահովում է դասի հաջող մեկնարկ: պրիզմա կարելի է կազմել նաև անհատապես, բայց առավել արդյունավետ է խմբային աշխատանքի արդյունքները:



Վենի դիագրամա

Կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս մեթոդը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը բացահայտելու նպատակով:



Т-աձև, կամ М-աձև



Т – աձև աղյուսակ

Մեթոդական ճկուն միջոցներից է, որը կիրառվում է միևնույն հասկացության, միևնույն խնդրի երկու կողմերը դրական կամ բացասական կողմերը, համեմատելու համար: Մեթոդը իրականացվում է դասի տարբեր փուլերում:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Աղյուսակը կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով Т, /М/- տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու/ երեք/ բաժնից,որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները,դրական կամ բացասական/չեզոք/ կողմերը:

ԲԱՆԱՎԵՃ

Բանավեճը կոնկրետ հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակման, քննարկման ձևով ուսուցման ակտիվ մեթոդ է:

Մեթոդը կիրառվում է, երբ նպատակ է դրվում՝

- ձևավորել նոր գիտելիքներ
- ձևավորել հաղորդակցական հմտություններ
- սովորողների մոտ ապահովել այս կամ այն հարցերի մասին խորհելու, դրանց էությանն մեջ ներթափանցելու մոտիվացիան
- սովորողներին օգնել սեփական կարծիքը ամրապնդելու և պահպանելու հարցում:

ԽՈՐԱՆԱՐԴՈՒՄ ՄԵԹՈԴ

Խորանարդումը մեթոդական հնար է, որն օգնում է հարցը դիտարկել տարբեր տեսանկուններից: Այս մեթոդը կիրառելու համար նախապես յուրաքանչյուր սովորողի էլեկտրոնային հասցեին; Օգտագործելով էլ. գրատախտակի գործիքները , էկրանի վրա նախապես բացում ենք գունավոր խորանարդը և ցուցադրում սովորողներին:

1. Սկզբում անհրաժեշտ է ծանոթանալ նյութին, գտնել և ընդգծել գլխավոր հերոսներին /word ծրագրի գործիքներով U / : Առաջադրանքի բնույթից կախված՝ աշխատանքը կարող է կատարվել բանավոր կամ գրավոր: Տրված առաջադրանքն ընդհանուր գծերով քննարկելու համար տրամադրվում է 2-4 րոպե ժամանակ: Սովորողը սկսում է պատմել նյութի որևէ հերոսի անունից: Այս եղանակն օգտագործելով, պատմական դրվագն ավելի հասկանալի է դառնում սովորողին:

2. Պարզաբանեմ. ËáñuÝuñ¹Á շարժելով էլ գրատախտակի վրա, ցույց ենք տալիս նրա որևէ նիստը, որի վրա գրված է <<Նկարագրի՛ր>> , դա ÝßuÝuÏáõÙ ¿ uÝhñuÅ»ßï ¿ áõßu¹Çñ áõëáõÙÝuëÇñ»É ¨ ÝÏuñu·ñ»É դրվագի բովանդակությունը/ ընտրիր գույն, խորհրդանիշ նյութի համար/:

Paint / Wizardbrush / ծրագրով նկարել պատմական իրադարձության համար խորհրդանիշ և այն պահպանել <<աշխատանքային սեղանի>>վրա /desctop/:



Գլուխ 2

2.1. Դասի կշռադատման մեթոդներ

- Քառաբաժան աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Թեստեր
- Հարցեր ու պատասխաններ , ամփոփում և այլն:

ՔԱՌԱԲԱԺԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ[4]

Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս;Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կա փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս;

Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ բաժանելով 4 մասի; Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում; Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոփոխել; Կարելի է իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները / օրինակ ըստ Բլյումի դասակարգման/;

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ինչպե՞ս կարող եմ օգտագործել	Ի՞նչ եզրակացություն արեցի

Քառաբաժան աղյուսակի վերը նշված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել ըստ համարակալման; Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները

[4] Ս.Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2022, էջ 25:

ներկայացնում են միմյանց, ապա ամբողջ թիմին; Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է ամբողջ դասարանին; Հնարավոր է որ ըստ ուսումնասիրվող նյութի կարևորվի տեքստի պատմվածքի կամ նյութի դիտարկումը որոշակի տեսանկյունով;, ինչը կնպաստի, որ հատկապես ուշադրություն դարձվի քառաբաժանի այս կամ այն հատվածի գրառումների վրա, որոնք հատուկ պետք է առանձնացնել ներկայացնել և քննարկել; Հարկ է նշել որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասի կշռադատման փուլում:

Ներառական կրթության համար նույնպես կիրառելի է քառաբաժան աղյուսակը գունային տարբեր ձևերով; Ամեն մի գույնի աղյուսակի մեջ Ներառական կրթություն ստացող աշակերտը կարող է գրել իր սովորածը պատմական թիվը պատմական անունը, իր հասկացածը:

ԿԱՊԿՈՒ կրթություն ստացող երեխաների համար առավել մատչելի է պատմության դասը տանել աղյուսակների սխեմաների միջոցով:

ՄՏԱԾՈՂ ԳԼԽԱՐԿՆԵՐ ՄԵԹՈԴ

Մտածելու **6** գլխարկներ), մտագրոհման ձև, գործիք՝ առաջին անգամ առաջարկված Էդուարդ դե Բոնոյի կողմից, որը «6 գունավոր գլխարկների» օգնությամբ ավելի արդյունավետ է դարձնում խմբակային քննարկումը, օգնում է հետևողականորեն պլանավորել մտածելու ընթացքը[5] Այս մեթոդի հիմքում ընկած է զուգահեռ մտածելու հայեցակարգը: Որպես կանոն, այս կամ այն որոշումներն առաջանում են քննարկման ընթացքում մտքերի բախումներից, սակայն ոչ միշտ է ամենալավ տարբերակն ընտրվում:Այս մեթոդի օգնությամբ տարբեր մոտեցումներ ու գաղափարներ հանդես են գալիս միաժամանակ՝ առանց իրար հանդեպ ինչ-որ առավելությունների: Նկարագրելով մտածելու

6 ռեժիմներ՝ Դե Բոնոն համեմատում է դրանք 6 տարբեր գույնի գլխարկների հետ: Քննարկման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ «հագնում է» մի գլխարկ և կատարում իր գործառույթները:

- 1.1Կապույտ գլխարկ — Կառավարում
- 1.2Սպիտակ գլխարկ — Փաստեր և տեղեկատվություն

- 1.3Կարմիր գլխարկ — Զգացմունքներ և էմոցիաներ
- 1.4Սև գլխարկ — Քննադատություն, վատատեսություն
- 1.5Դեղին գլխարկ — Լավատեսություն
- 1.6Կանաչ գլխարկ — Ստեղծարարություն



Ելքի քարտ մեթոդ

Ելքի քարտերը լրացվում են **3-2-1** մեթոդով , որը կատարվում է անդրադարձի ընթացքում:

Սովորողները պետք է.

- Գրեն երեք բան, որ սովորեցին այդ դասի ընթացքում,
- Երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ են համարում,
- Մեկ բան, որ վաղն անմիջապես կկիրառեն,
- Առաջարկություններ:

Գլուխ 3

*3.1.*ԴԱՍԻ ԱՐԴՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Աշխարհագրության նկատմամբ աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի աշխատանքը սկզբնաղբյուրների հետ:

Բացի բուն դասագրքային դասից ուսուցիչը կարող է հանձնարարել նաև ընթերցել հատվածներ պատմական այս կամ այն սկզբնաղբյուրից: Սկզբնաղբյուրներ են համարվում պատմական նամակները, լուսանկարները, ամսագրեր կամ գիտական հոդվածները, պատմական փաստաթղթերը: Դպրոցական դասագրքում ևս կան հատվածներ սկզբնաղբյուրներից, պատմիչների աշխատություններից:

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից, ուղղակիորեն առնչվել պատմական այս կամ այն նյութին: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել, որպես դասագիրքը լրացնող միջոցներ: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտություն, ձևավորում աշակերտի մոտ կարծիք-բանավեճ: Շատ հաճախ դասագրքերը մատուցում են պատրաստի գիտելիք:Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է դասագրքերին այլընտրանք ունենալու, դրանց լրացնելու իմաստով:

Աշխարհագրության դասաժամին նպատակահարմար է կատարել նաև խմբային աշխատանք ելնելով թեմայից ու պատմական դեպքերից: Դասարանը բաժանել 4-հոգանոց տարասեռ խմբերի ու յուրաքանչյուր խմբի բաժանել թերթիկներ, որոնց վրա գրված են հարցեր ելնելով ուսումնասիրվող պատմական դեպքերից: Յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է պատասխանը, վերջում կատարվում է վերլուծություն-ամփոփում: Անհրաժեշտ է խմբային աշխատանքի մեջ ներգրավել բոլորին և հարցումներ անել բոլոր աշակերտներին: Նոր դասի հաղորդումը նույնպես կարելի է կատարել խմբային աշխատանքով կապելով անցածի հետ: Դասը բաժանել խմբերին ըստ պարագրաֆի ենթակետերի և հետո կատարել հարցումներ: Աշակերտները այսպես գրեթե լիովին սովորում են դասը դասարանում: Խմբային աշխատանքի ժամանակ ուսուցիչը ուղղորդում և ամրապնդում է սովորածը: Խմբային աշխատանքի ընթացքում

սովորողներն առիթ են ունենում որոշումներ կայացնել,պատմական հիմնախնդիրներ վերլուծել, կարծիք արտահայտել, բանակցություններ վարել այլ խմբերի հետ:

Խմբերի հետ պատմական նյութից ելնելով հնարավոր է կազմակերպել դերային խաղ: Դերային խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ ունեցող թեմաներ, մասնակիցները կարող են ներկայացնել պատմական որևէ տարբեր տեսակետներ ունեցող դերեր: օրինակ հայոց թագավորների, սպարապետների կերպարներ,պատմականորևէ ժամանակշրջան:

Դերային խաղը կարելի է կազմակերպել փոքր խմբերով, հետո կատարել վերլուծություն քննարկում դասարանում:

<< Աշխարհագրության >> դասավանդման ու ուսուցման մեթոդների մեջ մեծ դեր ունի ուսուցչի կենդանի, արտահայտիչ խոսքը, դասի մատուցման ձևը, որը արտահայտվում է տարբեր ձևերով պատմում, դասախոսություն, զրույց, պատմական փաստաթղթերի բարձրաձայն ընթերցում, արտասանություն: Վերը թվարկված այս ձևերը միավորվում են բանավոր ուսուցման մեթոդների խմբի մեջ:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Աշխարհագրության դասաժամին կարևոր է նաև ուսուցման դիդակտիկ մեթոդների կիրառումը, այն է համապատասխան նկարների ու քարտեզների օգտագործում, ինչպես նաև տեխնիկական միջոցների , ձայնագրությունների , ինչու ոչ հեռախոսների կիրառումը/quizizz, learning. app և ալն/ իհարկե համակարգչային տեխնիկայի օգտագործում, որը շատ արդյունավետ է և ունի լայն ու բազմաբովանդակ հնարավորություն: Այսօր մանկավարժական գրականության մեջ մուտք է գործել մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը: Համակարգչով ցույց է տրվում և դասի վերաբերյալ նկարներ , և պատմության տարեթվեր, անգամ որևէ հատված պատմական այս կամ այն դեպքերից ու իրադարձություններից տեսանյութով սլայդների ձևով / պրեզենտացիա/: Կարևոր է նաև համակարգչով պատմության դասի վերաբերյալ որևէ ֆիլմի դիտումը:

Թեստ

Թեստ/ անգլերեն նշանակում է փորձարկում կամ ստուգում/, որը նախատեսված է չափորոշիչների համապատասխան սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափման և արդյունքները մեկ կամ մի քանի հատուկ նպատակներով օգտագործելու համար: Սովորողների առաջադիմության ստուգման համար տրվում են թեստեր կիսամյակի վերջում, ուսումնական տարվա ավարտին կամ յուրաքանչյուր թեմայի ուսուցման վերջում՝ ստուգելու համար նյութի յուրացման մակարդակը և աստիճանը: Այդ թեստերը լինում են կիսամյակային ամփոփիչ, տարեվերջյան ամփոփիչ և ուսուցանվող/ձևավորող/ թեստեր:

Պատմության դասի յուրացման ամրապնդման համար կարևոր է օգտագործել ուսուցչի կողմից կազմված կամ արդեն առկա թեստային առաջադրանքներ, որոնք ընդգրկում են պատմական կարևորագույն դեպքերն ու թվերը և քաղաքական գործիչների անունները, դասի թեմաներ և այլն:

Տրամաբանական համառոտագրություններ

Դասագրքով աշխատելիս աշակերտը ոչ միայն պետք է կարողանա վերարտադրել կամ սերտել ուսուցվող թեման, այլև ցանկալի է որ նա համադրի դեպքերն ու փաստերը, ստեղծի կապ անցածի ու ներկայի հետ: Ուստի անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել կազմել տրամաբանական սխեմա/ մոդուլ, դիագրամմա, աղյուսակ և այլն/ու ինքնուրույն համառոտագրություն տետրում:

Շատ կարևոր է որ աշակերտները անպայման ունենան աշխարհագրության տերմինների,ժամանակագրության , հասկացությունների տետր, որով ամրապնդվում է նոր դասի յուրացումը:

Դա կապված կարող է լինել աշխարհագրության հիմնահարցերի հետ: Ուսուցիչը հայտնում է նախապես որոշված դասի թեման ինքնուրույն պատրաստվելու համար, ինչպես նաև տալիս է հիմնական հարցերն ու գրականությունը:

Պարապմունքների ընթացքում քննարկվում է առաջադրված թեման ու հարցերը, լսում աշակերտների առանձին հաղորդումները, իսկ վերջում ուսուցիչը ընդհանուր եզրակացություններ ու բացատրություններ է անում թեմայի շուրջ:

Լիովին հնարավոր է և նպատակահարմար է առավել պատրաստված և առարկայով հետաքրքրվող աշակերտներին տալ անհատական առաջադրանքներ: Թույլ աշակերտներին նույնպես կարելի է տալ անհատական առաջադրանքներ, բայց այն պետք է լինի ավելի պարզ ու թեթև ելնելով աշակերտի ընդունակություններից: Աշակերտների պատմողական և բանավոր խոսքի շարադրման համար կարևոր է նաև լրացուցիչ գրականություն և արտադասարանային ընթերցանություն կազմակերպելը: Պատմական որևէ ժամանակաշրջանի հետ կապված գեղարվեստական գրքերի ընթերցումը նպաստումէ աշակերտների զարգացվածությանը, պատմական դեպքերի ավելի մատչելի ընկալմանը: Ուսուցիչը դրանով կիրառում է դասընթացի ընթացքում միջառարկայական կապերը պատմության հետ: Պատմության դասի ժամանակ քարտեզների օգտագործումը ոչ միայն միջառարկայական կապ է աշխարհագրության հետ, այլ նաև ավելի պատկերավոր է դառնում աշակերտներին պատմական վայրերը, քաղաքները ու ճակատամարտերը, դյուրացնում քարտեզի միջոցով աշակերտի պատկերացումները և հեշտացնում դասի ընկալումը:

Դասապրոցեսից դուրս ուսուցման ակտիվ մեթոդներ կարող են լինել մրցույթ-վիկտորինաները, միջոցառումները նվիրված պատմական որևէ թեմային կամ Հայաստանին, էքսկուրսիաները և արշավները Հայաստանի պատմական վայրերով:

Աշխարհագրության դասաժամերին մտածողության հմտությունների զարգացման տեսանկյունից կարևոր է Բենջամին Բլումի առաջարկած ուսուցման դասակարգումը: Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ: Նոր գիտելիքները դարձնում է կիրառական, գնում դեպի գիտելիքների խորացում ու վերլուծություն:

Աշխարհագրության որոշ թեմաներ նպատակահարմար է անցնել միաժամանակ՝ կիրառելով բազմաթիվ մեթոդներ և օգտագործել միջառարկայական կապերը:

Արդի տեղեկատվական հասարակության պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար անհրաժեշտ է յուրացնել և ներդնել ուսուցման նորարարական տեխնոլոգիաներ, հատկապես դասի ժամանակ համակարգչային տեխնիկայի կիրառումը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը, պատմական դեպքերի ու փաստերի ցուցադրումը համակարգիչով/ ֆիլմ, պրեզենտացիա-սլայդ/ ավելի հետաքրքիր է դարձնում դասը: Այն լինում է մատ-չելի անգամ դասարանում թույլ սովորող աշակերտների համար:

Յուրաքանչյուր դաս ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների արդյունավետ իրականացում: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է, չափորոշիչային պահանջներին համապատասխանեցնելը, ուղիների, մեթոդների ու հնարների ճիշտ ընտրելը, դասի մատուցումը և ժամանակի մեջ տեղավորվելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով դասավանդման մեթոդները, ես հանգեցի այն եզրակացության, որ արդյունավետ մեթոդների նպատակային ընտրությունը կարող է նպաստել դասավանդման որակի բարձրացմանը, հանրակրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների իրականացմանը: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է տիրապետի դասավանդման մեթոդների այն բազմազանությանը, որն այսօր մանկավարժությունը կիրառում է: Շատ կարևոր է նաև ուսուցչի արհեստավարժությունը մեթոդների ճիշտ ընտրության համար:

Մեթոդների ընտրությունը ի վերջո սերտորեն կապված է կարողունակությունների ձևավորման հետ: Հանրակրթական նոր չափորոշչի պահանջները լավագույնս իրագործելու համար ուսուցիչները պետք է առավել մանրակրկիտ ընտրեն կիրառվող մեթոդները:

Աշխարհագրության ուսուցչի խնդիրն է ձևավորել հուզական հասունություն դրսևորող, կշռադատող մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող և մեկնաբանող ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային և համամարդկային արժեքներ կրող, հայրենասիրական, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, ազգապահպան ակտիվ քաղաքացի՝ օգտագործելով աշխարհագրություն առարկան և ներառելով նրա մեջ հայրենասիրություն: Ցանկացած դաս-ուսուցում և մեթոդների կիրառում տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մեր խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները , կարողությունները:

Մեթոդները դիտարկվում են նաև որպես աշակերտակենտրոն ուսուցման մի տարբերակ, որն էապես բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը և աշակերտների մոտիվացվածությունը; Աշխարհագրության դասավանդման մեջ որպես նոր ռազմավարություն ընտրված մեթոդները օգնում են աշակերտների մոտ ձևավորել աշխարհագրական-պատմական մտածողություն, այն հնարավորություն է տալիս պատմության ընկալման շրջանակն էապես ընդլայնելու և սովորողներին մղում է առավել խորքային դիտարկումների: Այն դասավանդումը դարձնում է ավելի բովանդակային և մոտիվացնող: Ուսուցման այս մեթոդները մեզ կօգնեն պատմությունը պարզապես չդարձնել թվականների և անունների

շարան, այլ, որ սովորողները քննեն պատմությունը, ըմբռնեն պատմական կարևոր հասկացությունները և դասեր քաղեն պատմությունից։

Այստեղ ներկայացված օրինակները պարզապես միջոցներ էին, որոնց նպատակն էր օրինակներով պարզաբանել տեքստի հիմնական գաղափարները և ցույց տալ պատմական կրթության մեջ բազմատեսանկյուն մոտեցման տարբեր եղանակները: Նորարարական մեթոդները պետք է լինեն ավելի բազմակարծիք, ներառող, ինտեգրող և համակողմանի, քան աշխարհագրության դասավանդման ավելի ավանդական մոտեցումները:

Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ

1. Հ. Ղևոնդյան աշխարհագրության դասավանդման մեթոդիկա , Երևան 2001:
2. Ս.Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
3. Westwood, P. (2008). What teachers need to know about Teaching methods. Camberwell, Vic, ACER Press
4. https://hy.wikipedia.org/wiki/ԳՈՒՍ_(Գիտեմ-Ուզում_եմ_Սովորել-Սովորել_եմ)
5. Էդուարդ դե Բոնո (1985). *Six Thinking Hats: An Essential Approach to Business Management*. Little, Brown, & Company. ISBN 0-316-17791-1 (hardback) and 0316178314 (paperback).
6. .Селевко Г.К. Современные технологии: У чебное пособие.-М.: Народное образование, 1988.